

Արձանագրություն №9/2018-2019

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. ապրիլի 11-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 63-ը (վաթսուներեք):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Մինչ գիտական խորհրդի նիստի բացումը, ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց նորանշանակ ուսումնական գծով պրոռեկտոր Մ. Սողոմոնյանին, գիտական քաղաքականության ու միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ա. Բաբաջանյանին և գիտական քարտուղար Լ. Հովսեփյանին:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

- 1. Դեկանի ընտրության մասին ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունած որոշման հաստատում** (զեկ. գիտխորհրդի՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն.Ն. Մարտիրոսյան):
- 2. Դոցենտի գիտական կոչումների շնորհում** (զեկ. գիտխորհրդի՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն.Ն. Մարտիրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյան):
- 3. 2019-2020 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Ա. Ժ. Բաբաջանյան):
- 4. 2018-2019 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Մ. Ա. Սողոմոնյան):
- 5. 2018-2019 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Մ. Ա. Սողոմոնյան):
- 6. ԵՊՀ ապրանքանիշերի գրքի (Brand-book) ներկայացում** (զեկ. հանրային կապերի ծառայության ղեկավար Գ. Էմին-Տերյան):
- 7. Հաղորդում ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին** (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):

Ընթացիկ հարցեր.

8.1. ԵՊՀ ուսումնական մասնաշենքերից դուրս գտնվող ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգի քննարկում և հաստատում:

8.2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխություն կատարելու մասին:

8.3. «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին

Գի տխր հր դի ան դ ամ ն եր ի կ ող մ ի ց օ ր ակ ար գ ի հ ամ ար այ լ հ ար ց չ առ աջ ար կ վ ե ց , և մ աս ն ակ ի ց ն եր ի ք ա ց ք վ ե ար կ ու թ յ ամ ք ը ն դ ու ն վ ե ց ն ի ս տի օ ր ակ ար գ ը :

1. **Լսեցին.** – Ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության՝ ֆակուլտետային գիտխորհուրդների որոշումների հաստատման մասին : Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց ֆակուլտետի ղեկանի պաշտոնների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Ղազինյան Գագիկ Սերգեյի	Իրավագիտության ֆակուլտետի ղեկան
1.	Բաղդասարյան Ալեքսան Ստեփանի	Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ղեկան
2.	Բարսեղյան Գևորգ Ռուդիկի	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ղեկան

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Մուրադյան Սամվել (նախագահ)
2. Ալավերդյան Ռոման
3. Թոթոյան Ժենյա

Գազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 63 անդամներից 63-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Մուրադյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	դեմ	անվավեր
Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի հավակնորդներ				
1.	Ղազինյան Գագիկ Սերգեյի	59	3	1
2.	Բաղդասարյան Ալեքսան Ստեփանի	59	3	1
3.	Բարսեղյան Գևորգ Ռուդիկի	56	5	2

Որոշեցին. – 1.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Ընտրված ղեկանների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ԵՊՀ ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության պաշտոնների տեղակալման մասին ընթացակարգերի:

2. Լսեցին. - դոցենտի գիտական կոչումների շնորհում:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին դոցենտի կոչումների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Ը/Ը	ԱՉԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
2.	Ամիրխանյան Արտակ Արմենակի	Իջևանի մասն. ընդհ. մաթեմ. և բնագ. ամբ. ասիստենտ
2.	Չաքարյան Նարինե Համայակի	բուսաբանության և սնկաբանության ամբ. ասիստենտ
3.	Մանուկյան Եսթեր Սոսի	քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ. ասիստենտ
4.	Սկրոչյան Մարինե Սարգսի	երկրաֆիզիկայի ամբ. ասիստենտ
5.	Միրզոյան Լյուբա Բարատովի	երկրաֆիզիկայի ամբ. ասիստենտ
6.	Պարոնյան Նաիրա Վրույրի	հայոց լեզվի պատմության ամբ. ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Մուրադյան Սամվել (նախագահ)
2. Ալավերդյան Ռոման
3. Թոթոյան Ժենյա

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 63 անդամներից 63-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս.Մուրադյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	դեմ	անվավեր
Դոցենտի կոչման հավակնորդներ				
1.	Ամիրխանյան Արտակ Արմենակի	62	1	0
2.	Չաքարյան Նարինե Համայակի	62	1	0
3.	Մանուկյան Եսթեր Սոսի	59	4	0
4.	Սկրոչյան Մարինե Սարգսի	60	3	0
5.	Միրզոյան Լյուբա Բարատովի	58	5	0
6.	Պարոնյան Նաիրա Վրույրի	61	1	1

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե՝ հաստատելու վերոնշյալ աշխատակիցներին դոցենտի կոչումներ շնորհելու մասին ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը:

3.Լսեցին - 2019-2020 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատման վերաբերյալ զեկույցը, որը ներկայացրեց պրոռեկտոր Ա. Բաբաջանյանը: Առաջարկվում է բակալավրիատի 2019-2020 ուստարվա համար «Մաթեմատիկայի և մեխանիկայի» ֆակուլտետի «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» դասընթացի համար սահմանել 600 հազար դրամ վարձավճար, Պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» կրթական ծրագրի համար՝ 430 հազար դրամ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի հեռակա ուսուցման համար՝ 520 հազար դրամ: Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի հեռակա ուսուցման համար սահմանել 344 հազար դրամ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետի «Լրագրություն» կրթական ծրագրի համար՝ 344 հազար դրամ, իսկ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանություն» կրթական ծրագրի հեռակա ուսուցման համար առաջարկվում է սահմանել 344 հազար դրամ, իսկ «Կրոնագիտություն» կրթական նոր ծրագրի համար էլ՝ 430 հազար դրամ վարձավճար: Ա. Բաբաջանյանը նշեց, որ մագիստրոսական կրթական ծրագրերի վարձավճարների փոփոխություններ չկան: Ասպիրանտուրայի կրթական ծրագրերի վարձավճարների փոփոխություններ չկան ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ՝ օտարերկրյա ուսանողների համար:

Արտահայտվեցին – Ա. Միմոնյանը նկատեց, որ սրանք ոչ թե փոփոխություններ են, այլ նոր կրթական ծրագրերի վարձավճարներ են, որոնք նախկինում չեն եղել: Ֆինանսահաշվարկային ամբիոնի վարիչ Հ. Մնացականյանը հետաքրքրվեց, թե վարձաչափերի փոփոխման կամ հաստատման համար ինչ տրամաբանություն է գործում, արդյո՞ք ինքնաձախս է ծածկում և նաև ապահովում շահույթ և արդյո՞ք շահույթն ապահովում է զարգացում: Վերջինս առաջարկեց դիտարկել նաև մագիստրոսական այն ծրագրերի վարձավճարների հարցը, որոնց տևողությունը 1.5 տարի է, որպեսզի սովորողը վճարի 2-րդ ուսումնական տարվա միայն 1-ին կիսամյակի վարձը: Ի պատասխան՝ Ա. Միմոնյանը նշեց, որ ԵՊՀ-ում ծախսը ծածկող մասնագիտությունները այնքան էլ շատ չեն և կան մասնագիտություններ և վարձավճարներ, որոնք ծախսերից ցածր են, ինչպես օրինակ՝ բնագիտական որոշ մասնագիտությունների պարագայում: Բնագիտական ոլորտում կան մասնագիտություններ, որ շահույթի դեպքում պետք է վարձավճարներն էականորեն բարձրացվեն, ինչը սոցիալ-տնտեսական այս իրավիճակում ծանր դրության մեջ կոնի սովորողներին և շահույթի մասին խոսք լինել չի կարող, քանի որ ավելի կարևոր են այդ մասնագիտությունների գոյությունն ու ծրագրերը: Ա. Միմոնյանը պատրաստակամություն հայտնեց պրոռեկտորների հետ քննարկումներ կազմակերպել տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրոսական ծրագրի հետ կապված բարձրացված հարցի շուրջ: Վարձավճարների մաս-մաս վճարման նոր կարգի հետ կապված բարձրացված հարցի վերաբերյալ Ա. Միմոնյանը նկատեց, որ դա բացասական ազդեցություն է ունենալու համալսարանի և բարձրագույն կրթության ոլորտի վրա, քանի

որ նախկինում բանկերում դրված գումարներից ստացվող շահույթները, տոկոսները հետայսու քիչ են լինելու: Բացի այդ, ամիս-ամիս վճարումների կարգը ևս խնդիրներ են առաջացնելու, խախտվում է համալսարանի կրթակազմակերպչական հիմքը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նկատեց, որ եթե օրենքը չի նախատեսում կոնկրետ չափեր, ԲՈՒՀ-ը կարող է սահմանել վարձավճարների ամսեկան վճարման հավասարաչափ բաշխում, ինչը որոշակիորեն զերծ կպահի հավելյալ խնդիրներից:

Որոշեցին – հաստատել 2019-2020 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերն՝ ըստ կրթական ծրագրերի ու կուրսերի:

4. Լսեցին - 2019-2020 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատման հարցը: Պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, ներկայացնելով կանոնակարգը, նշեց, որ Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունից ստացվել է առաջարկ՝ այսուհետ դրանք հաստատել ոչ թե որպես կանոնակարգ, այլ ամեն տարվա կտրվածքով իրականացնել փոփոխություններ: Նրա զեկուցմամբ՝ այս անգամ փոփոխություններն առնչվում են ժամկետներին, որոնք վերաբերում են ինչպես փաստաթղթերի ներկայացմանը, այնպես էլ՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կազմակերպմանը: Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի մեջ առաջարկվում է այն կրթական ծրագրերին, որոնց ընդունելությունն իրականացվում է բացառապես քննությունների արդյունքների հիման վրա, ավելացնել «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագիրը: Մ. Սողոմոնյանը տեղեկացրեց, որ առաջարկվում է նաև «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցության հնարավորություն տալ ինչպես «Կենսաբանություն», այնպես էլ՝ «Կենսաքիմիա» մասնագիտության բակալավրի շրջանավարտներին, քանի որ նախկինում հնարավորություն էր տրվում միայն «Կենսաբանություն» մասնագիտության բակալավրի շրջանավարտներին: Բացի դրանից, նախատեսվում է «Կիրառական մանրէաբանություն» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության համար մասնակցության հնարավորություն տալ «Կենսաբանություն», «Կենսաքիմիա» մասնագիտության բակալավրի շրջանավարտներին՝ համապատասխան ՄՈԳ-երի հաշվառմամբ:

Որոշեցին – հաստատել 2019-2020 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը:

5. Լսեցին - 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատման հարցը: Պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը ներկայացրեց կանոնակարգը:

Որոշեցին - հաստատել 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը:

6. Լսեցին - հաղորդում ԵՊՀ ապրանքանիշերի գրքի (Brand-book) ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ: ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Գ. Էմին-Տերյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ ապրանքանիշի փոփոխման ու կանոնակարգման ուղղությամբ մոտ մեկ տարի աշխատանքներ են իրականացվել համալսարանի աշխատակից Է. Պողոսյանի կողմից: Վերջինս տեսապատկերի միջոցով ներկայացրեց ԵՊՀ ապրանքանիշերի գիրքը՝ ցույց տալով կատարված փոփոխությունները և նոր գաղափարների կյանքի կոչումը: Կատարված աշխատանքների արդյունքում ԵՊՀ-ն ունենալու է ամբողջական «տեսողական ինքնություն»:

Գիտիտրիքի անդամները որոշ դիտարկումներով ու առաջարկություններով հանդես եկան ԵՊՀ ապրանքանիշի դիզայնի վերաբերյալ:

Որոշեցին - ԵՊՀ ապրանքանիշերի գրքի (Brand-book) ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացումն ընդունել ի գիտություն:

7. Լսեցին – հաղորդում ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին: ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը զեկուցեց ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին՝ նշելով, որ պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի համաձայն՝ սահմանված են ուսումնական, մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների տեսակներ: Նա փաստեց, որ պրակտիկայի յուրաքանչյուր տեսակ ունի իր նպատակը: Ուսումնական պրակտիկան ներկայում իրականացվում է 7 ֆակուլտետում: Կարգով սահմանված է, որ ուսումնական պրակտիկան պետք է անցկացվի առաջին և երկրորդ կուրսերում, իսկ տևողությունը յուրաքանչյուր կրթական ծրագիր ինքն է սահմանում իր համար: Հ. Ժամհարյանի հավաստմամբ՝ 11 ֆակուլտետ այսօր անցկացնում է մանկավարժական պրակտիկա այն կրթական ծրագրերով, որոնք համարժեք են կամ համահունչ դպրոցում՝ դասավանդվող առարկաներին: Մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է՝ համաձայն «ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգի»: Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում: Կարգի համաձայն՝ մասնագիտությամբ աշխատող ուսանողը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել իր աշխատավայրում՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք»: Ուսումնամեթոդական վարչության պետը ներկայացրեց նաև պրակտիկայի կազմակերպման և անցկացման հիմնական դժվարությունները, որոնք առանձնացվել են՝ ըստ ուսանողների շրջանում անցկացրած հարցումների, ապա առաջարկեց դրանց լուծման մեխանիզմները:

Արտահայտվեցին – ՈԻԽ նախագահ Դ. Ափոյանը նկատեց, որ պրակտիկաների անցկացման հետ կապված դժվարություններ կան, երբ հնարավոր է պետական մարմինները չընդունեն ուսանողների պրակտիկան անցկացնել իրենց գերատեսչություններում, ուստի նաև այդ հարցում կառավարությունն անելիքներ ունի և համալսարանը պետք է հետևողական լինի և նաև պահանջի կառավարությունից առավելագույնը: Անդրադառնալով պրակտիկայի ընթացքում սովորողների բացակայությանը՝ ըստ նրա՝ դրա հիմնական պատճառը վատ պայմաններն են: Այդ խնդրի բարելավման համար պետք է աշխատանքներ իրականացվեն: Պետք է

արձանագրել նաև, որ վերջին մեկ-երկու տարիների ընթացքում առաջընթաց է գրանցվել պրակտիկաների կազմակերպման գործում: Ա. Ժամհարյանն ի պատասխան նկատեց, որ շատ կարևոր է պրակտիկայի ղեկավարի ընտրությունը, ով բարեխղճորեն կկազմակերպի այն և ոչ թե ուղղակի ժամանակ վատնելու միջոց կլինի: Դրա համար պատասխանատուն պետք է լինի ամբիոնի վարիչը, ով պատասխանատվություն կկրի նաև պրակտիկայի որակյալ անցկացման համար: Պրոռեկտոր Սողոմոնյանը նշեց, որ խնդրին պետք է առավել բովանդակային կողմից մոտենալ և համակարգային առումով դիտարկել: Պրակտիկաների կազմակերպումը երբեք արդյունավետ չի լինի, չի բարելավվի, մինչև հարցին չմոտենանք այն տեսանկյունից, թե ինչի հիման վրա է կառուցվում բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը, որքանով են հաշվի առնվում աշխատաշուկայի պահանջները: Երբ կհամապատասխանեցվեն մեր ծրագրերն ու ծառայությունները աշխատաշուկայի հետ, ապա պրակտիկաներն էլ արդյունավետ կլինեն: Ռեկտոր Ա. Միմոնյանը խնդրի վերաբերյալ նկատեց, որ պրակտիկաների կազմակերպման բովանդակային մասը պետք է իջնի ֆակուլտետներ և ամբիոններ, դրանց բովանդակությունը հստակ կազմվի այդ օղակներում, և քանի դեռ դա չլինի, պրակտիկաների արդյունավետությունը բարձր չի լինի: Եթե որևէ դասախոս լրջորեն չի զբաղվում պրակտիկայի կազմակերպմամբ, ապա պետք է զրկել նրան պրակտիկայի ղեկավար լինելու իրավունքից:

Որոշեցին - ԵՊՀ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին Հ. Ժամհարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

8.1. Լսեցին – քննարկում ԵՊՀ ուսումնական մասնաշենքերից դուրս գտնվող ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգի վերաբերյալ, ըստ որի՝ առաջարկվում է ԵՊՀ բոլոր բազաները միավորել՝ ստեղծելով «Ենթակառուցվածքների կառավարման միասնական ստորաբաժանում»: Միասնական ստորաբաժանումը գործելու է ԵՊՀ հիմնադրամի շրջանակում՝ ձևավորելով համալիրների միասնական կառավարման համակարգ: Դրա նպատակն է օպտիմալացնել վարչատնտեսական գործառնությունները և տնտեսել վերադիր ծախսերը, ընդլայնել և դիվերսիֆիկացնել մատուցվող ծառայությունների շրջանակն ու ուղղությունները, բարելավել որակը, ինչն էլ կբարձրացնի համակարգի գործունեության արդյունավետությունը:

Որոշեցին – հաստատել ԵՊՀ ուսումնական մասնաշենքերից դուրս գտնվող ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգը:

8.2. Լսեցին - բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխություն կատարելու մասին: Պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը նշեց, որ եթե նախկինում առաջացած առարկայական պարտքերի՝ կրեդիտների գումարը չէր գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը կարող էր առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով այդ առարկաների դասընթացները, ապա այժմ կրկնել չի կարող: Նա նաև փաստեց, որ դրույթը չէր վերաբերում պարտադիր զինվորական ծառայությունից

տարկետման իրավունքով ընդունվածներին, այժմ նաև այլ ուժային կառույցների կողմից տարկետման իրավունք ստացած ուսանողներին:

Որոշեցին – հաստատել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխությունները:

8.3. Լսեցին - «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին: Առաջարկվեց ԵՊՀ 100-ամյակի առթիվ «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության հաղթողներին 50 հազար դրամի չափով միանվագ կրթաթոշակ տրամադրելու մասին:

Որոշեցին – Հաստատել կարգում առաջարկվող փոփոխությունները և միանվագ կրթաթոշակ տրամադրելու առաջարկը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

11.04.2019թ.